ԼՂԻՄ ՆԳՎ-ՈՒՄ

Հունիսի 22-ից մինչև 29-ն ընկած ժամանակահատվածում Ստեփանակերտ քաղաքի ֆիլտրը ման կետ է տարվել 66 մարդ։ Այն անձինք, ովքեր բռնվել են հասարակական կարգ ու կանոնի կոպիտ խախտումների համար, ենթարկվել են վարչական պատասխանատվության։

Իրավախախտման համար 15 ռուբլով տուգանվել է Նորագյուղ գյուղի բնակիչ Արմեն Ալեքսանդրի Դաղյանը, 10 ռուբլով Ստեփանաձորի բանվոր Լորիկ Զարգարի Գևորգյանը, Ստեփանակերտ քաղաքի ժամանակավոր շաբաթոթ բնակիչ Սերգեյ Վարդանի Թադևոսյանը և № 5 շինմոնտաժային վարչության զոդող Վաչագան Վարդանի Թադևոսյանը։

1989 թվականի հունիսի 26-ին մոտավորապես ժամը 12.00 Բարդա-Խաչիսու ճանապարհի 24-րդ կիլոմետրի վրա ԱԺԿ 17-50 պետհամարանիշով ԳԱՋ-53 ավտոմեքենայի վարորդ, քյալբաջար քաղաքի բնակիչ Նազիմ Ահմեդ օղլի Նասիրովը դուրս է եկել հանդիպական երթևեկության շերտը և բախվել Լենինավան ավանի բնակիչ Միքայել Հարությունի Եալատրյանի վարած 92-32 պետհամարանիշով ԳԱԶ-24 ավտոմեքենային։ Բախման հետևանքով Մ. Հ. Եալատրյանը և ուղևոր, Մարտակերտ գյուղի բնակիչ Գուրգեն Արիս տակեսի Գոդոսյանը վախճանվել են տեղում։

Հետաքննությունը վարում է ՆԳ Մարտակերտի շրջանային բաժինը։

1989 թվականի հունիսի 28-ին մոտավորապես ժամը 19.00 ԱԺԿ 78-84 պետհամարանիշով ԳԱԶ-672 ավտոբուսը, որը պատկանում է Աղդամի ավտոտրանսպորտային ձեռնարկությանը, Շուշի քաղաքից Աղդամ մեկնելիս էլեկտրաէներգետիկական գործարանի վերին մասնաշենքի մոտակայքում քարկոծվել է։ Դրա հետևանքով ջարդվել է վարորդի կողմի ճակատային ապակին։ Զուգահեռ ներ չկան։

Ստուգման գործով զբաղվում է ՆԳ Ստեփանակերտի քաղաքային բաժինը։

Սուրբ Հարությունի Եկեղեցի Լեռնային Ղարաբաղ-Սովետական Կարաբախ թերթի ս. թ. հունիսի 29-ի համարում տպագրված «Անմարդկային ադարդ թղթակցության առթիվ հայտնում ենք. 1989 թվականի հունիսի 24-ին անհայտ անձանց կողմից հրկիզվել և ոչնչացվել է Ստեփանակերտ քաղաքի մի քանի բնակիչների բանջարանոցների թերթը, որոնք գտնվում են Ասկերանի շրջանի Շոշ գյուղի էնգելսի անվան կոլտնտեսության տարածքում, որի մասին ակտ է կազմվել ՆԳ Ստեփանակերտի քաղաքային տեղամասային տեսուչ Ռ. Մարությանի և տուժածներ Ա. Մուսայելյանի, Գ. Գնորոսյանի, Ռ. Աղաջանյանի, Բ. Կարապետյանի և Ա. Բաղիյանի կողմից։

Տվյալ ակտից հետևում է, որ բանջարանոցներին զրպարտանաց է հասցվել։ Վառել է Ա. Մուսայելյանի 25 մետր երկարությամբ ցանկապատը, ոչնչացվել 30 քառակուսի մետր տարածքի լորու ցանքերը, Գ. Գնորոսյանի բանջարանոցում ոչնչացվել են 100 քառակուսի մետր տարածքի կարտոֆիլի և պոմիդորի թփերը, վառել է Ռ. Աղաջանյանի 45 մետր երկարությամբ ցանկապատը, Բ. Կարապետյանի բանջարանոցում ոչնչացվել են լորու, սոխի, պոմիդորի ցանքերը, Ա. Բաղիյանի բանջարանոցում վառել է 25 մետր ցանկապատ, ոչնչացվել կարտոֆիլի 25 քառակուսի մետր և պոմիդորի 15 քառակուսի մետր տարածքի ցանքերը։ Ուրիշ վնասներ չկան։

Ստուգման գործով զբաղվում է ՆԳ Ասկերանի շրջանային բաժինը։